

18 յունուար 2022

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Տնօրէն
Պարոն Հայկակ Արշամեանին

Յարգելի պարոն Արշամեան

«Ազդակ»-ի աշխատակազմին եւ իմ անունով կ'ուզենք շնորհակալութիւն
յայտնել ձեզի, որ Գերմանիոյ մէջ գործող «Հայաստան» Համահայկական
հիմնադրամի յանձնախումբի կողմէ հանգանակուած 10.000\$-ը փոխանցեցիք
«Ազդակ»-ի դրամատան հաշիւին:

Լիբանանի մէջ այս դժուար օրերուն, նման աջակցութիւն մը բարոյական մեծ
իմաստ եւ նշանակութիւն ունի մեզի համար եւ կը պարտաւորեցնէ
դժուարութիւնները յաղթահարելու վճռակամութեամբ անխափան շարունակել
թերթի առօրեայ հրատարակութիւնը եւ այդպիսով ծառայել մամուլի
առաքելութեան:

Շնորհակալութեամբ եւ յարգանքներով՝
Շահան Գանտահարեան
Տնօրէն «Ազդակ» օրաթերթի

